Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
հունվարի 14-ի N 16 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ, ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹ

1. Սույն կարգով սահմանվում է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ նախկինում համայնքների վարչական սահմաններից դուրս, մարզերի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ, ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

2. Համայնքի ավագանին ընդունում է համայնքի վարչական սահմաններում ընդգրկվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման և կառուցապատման իրավունքով տրամադրմանը համաձայնություն տալու վերաբերյալ որոշում՝ նշելով հողամասի (հողամասերի) գտնվելու վայրը, չափերը, օգտագործման սահմանափակումները, պայմանները:

3. Համայնքի ղեկավարը պատրաստում է հողաշինարարական գործ, որում ներառվում են համայնքի ավագանու որոշումը, տեղանքի կադաստրային քարտեզը, որտեղ նշվում են օտարման, անհատույց (մշտական) օգտագործման և կառուցապատման իրավունքով տրամադրման ենթակա հողամասերը, դրանց շրջադարձային կետերի կոորդինատներն ու չափերը, հողամասի օգտագործման սահմանափակումների մասին տեղեկանքը, և ներկայացնում մարզպետին։

4. Մարզպետը եռօրյա ժամկետում նյութերն իր եզրակացության հետ միասին ներկայացնում է պետական լիազոր մարմին։

5. Պետական լիազոր մարմինը 15-օրյա ժամկետում ուսումնասիրում է ներկայացված նյութերը և անհրաժեշտության դեպքում դրանք համաձայնեցնում շահագրգիռ մարմինների հետ, այնուհետև համապատասխան եզրակացությամբ վերադարձնում մարզպետին։ Մարզպետը հնգօրյա ժամկետում եզրակացությունը տրամադրում է համայնքի ղեկավարին։

6. Բացասական եզրակացություն է տրվում, երբ ներկայացված տարածքները համընկնում են պետության կողմից նախատեսվող ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ հողամասերի հետ։

7. Դրական եզրակացության առկայության դեպքում՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխության բացակայության դեպքում համայնքի ղեկավարը Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ սահմանված կարգով իրականացնում է հողամասերի օտարումը, անհատույց (մշտական) օգտագործման կամ կառուցապատման իրավունքով տրամադրումը։

8. Բացասական եզրակացության դեպքում արգելվում են հողամասերի օտարումը, անհատույց (մշտական) օգտագործման և կառուցապատման իրավունքով տրամադրումը։

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

9. Համայնքի ավագանին ընդունում է համայնքների վարչական սահմաններում ընդգրկվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության տրամադրմանը համաձայնություն տալու վերաբերյալ որոշում՝ նշելով հողամասի (հողամասերի) գտնվելու վայրը, չափերը, օգտագործման սահմանափակումները, պայմանները։

10. Համայնքի ղեկավարը պատրաստում է հողաշինարարական գործ, որում ներառվում են համայնքի ավագանու որոշումը, տեղանքի կադաստրային քարտեզը, որտեղ նշվում են վարձակալության տրամադրման ենթակա հողամասերը, դրանց շրջադարձային կետերի կոորդինատներն ու չափերը, հողամասի օգտագործման սահմանափակումների մասին տեղեկանքը, և ներկայացնում մարզպետին։

11. Մարզպետը հնգօրյա ժամկետում քննարկում է ներկայացված նյութերը և դրանք համապատասխան եզրակացությամբ վերադարձնում համայնքի ղեկավարին։

12. Բացասական եզրակացություն է տրվում, երբ ներկայացված տարածքները վարձակալության ժամանակահատվածում համընկնում են պետության կողմից նախատեսվող ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ հողամասերի հետ։

13. Մարզպետի կողմից դրական եզրակացության առկայության դեպքում համայնքի ղեկավարը Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ սահմանված կարգով իրականացնում է հողամասերի վարձակալության իրավունքով տրամադրումը։

14. Համայնքների վարչական սահմաններում ընդգրկվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության տրամադրման ժամկետը սահմանվում է մինչև 10 տարի։

15. Սույն կարգի դրույթները չեն տարածվում պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերի, բնապահպանական հողերի, պատմության և մշակույթի հուշարձանների

զբաղեցրած և դրանց պահպանական գոտիների տարածքների, ինչպես նաև սահմանային շերտի ներսում գտնվող հողերի վրա։

16. Կառուցապատված հողամասերն օտարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ